ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022թ. սեպտեմբերի 11-15-ը Շվեյցարիայի Համադաշնության Ժնև քաղաք կատարած գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Նարեկ Տերյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ

3.Գործուղման վայրը և ժամկետները՝

Շվեյցարիայի , ք. Ժնև, 2022թ. սեպտեմբերի 11-15-ը

4. Հրավիրող կողմը՝

Ներդրումների խթանման գործակալությունների համաշխարհային ասոցիացիայի (WAIPA) գործադիր տնօրեն Իսմայիլ Էրսահին

5. Գործուղման նպատակը՝

Ներդրումների խթանման գործակալությունների համաշխարհային ասոցիացիա (WAIPA)՝ ս.թ. սեպտեմբերի 13-14-ը Ժնևում կայանալիք 26-րդ համաշխարհային ներդրումների համաժողովին մասնակցություն:

6. Քննարկված թեմաները՝

- Օտարերկրյա ուղղակի ներդրումների համաշխարհային միտումները այդ թվում՝ հետքովիդյան շրջանում, մարտահրավերներն ու ներգրավման խնդիրները:
- ՕՈՒՆ ներհոսքն ուղղված ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակների ապահովմանը:
- Ներդրումների ներգրավման գործակալությունների դերն ու առաջնահերթությունները ՕՈՒՆ ներգրավման գործընթացում:
- Էներգետիկայի ոլորտի փոխակերպման միտումներն ու զարգացումները

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

ՀՀ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Նարեկ Տերյանը մասնակցել է Ներդրումների խթանման գործակալությունների համաշխարհային ասոցիացիայի (WAIPA) 26-րդ համաշխարհային ներդրումների համաժողովին, որը հնարավորություն է տվել համագործակցելու ներդրումային գործակալությունների, պատկան մարմինների, միջազգային ներդրումային ոլորտի դերակատարների գլոբալ ցանցի հետ, ծանոթանալ համաշխարհային ներդրումների հետ կապված հիմնական մարտահրավերներին, մասնակից երկրների հետ բացահայտել գործնական լուծումները և ստեղծել նոր բիզնես հնարավորություններ ու գործընկերություններ:

Նարեկ Տերյանը մասնակցել է միջազգային արևային էներգետիկայի ալյանսի կլոր սեղան քննարկմանը նվիրված մինչև մեկ տրիլիոն ԱՄՆ դոլար ներդրումների մոբիլիզացիային՝ ընդլայնելու ներդրումները արևային էներգետիկայի ոլորտում: Քննարկման ժամանակ ներկայացվել է Հայաստանում տվյալ որոտի զարգացման միտումները, իրավական կարգավորումները, նախատեսվող և արդեն իսկ իրականացվող ծրագրերը, տեղի է ունեցել մտքերի փոխանակում:

Համաշխարհային ներդրումների համաժողովի ընթացքում Ն. Տերյանի կողմից ներկայացվել է տնտեսության զարգացման գործում օտարերկրյա ներդրումների կարևորությունը, դրանց իրականացման ընթացքում առաջացած խնդիրներին արագ ու համապարփակ լուծումներ տալու գործում համապատասխան մարմինների աշխատանքը, ներկայացվել է բարենպատ միջավայր ստեղծելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացվող լայնածավալ աշխատանքներն ու նախաձեռնությունները: Անդրադարձ է կատարվել համաժողովի մասնակից երկրների հետ ներդրումային գործընկերություն ստեղծելու, նաև համատեղ ուժերով ստեղծված մարտահրավերներին դիմակայելու և ընդհանուր բնույթ կրող խնդիրներին համատեղ լուծումներ գտնելու կարևորությանը:

Ներդրումների խթանման միջազգային հանրության հավաքը նաև հնարավորություն է տվել երկկողմ հանդիպումներ ունենալ:

Մասնավորապես, Ն. Տերյանը հանդիպել է Վարդան Սրմաքեշի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել է «Հայփրոսփեքտ» նախագիծը, Հայաստանի տարածքում կաշվի վերամշակման գործարան հիմնելու և ՀՀ-ում ներդրումներ իրականացնելու վերաբերյալ մի շարք հարցեր:

8. Ստորագրությունը, ամսաթիվը՝

16.09.2022թ.